ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար թղթի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-Թ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի ապրիլի 15-ին կնքված N «ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-Թ-19/3.1» պայմանագրում 2019 թվականի հունիսի 28-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվել է 2-րդ եռամսյակում նախատեսվող մատակարարվող ապրանքի մատակարարման ժամկետը ավելացնել 30 օրացուցային օրով:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի Հավելված N1 հանդիսացող տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով 2-րդ եռամսյակում նախատեսվող մատակարարվող ապրանքի մատակարարման ժամկետը սահմանվել մինչև 22.07.2019թ.:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 8.5 և 8.6 կետերը:

Պատվիրատու՝ ***ՀՀ քննչական կոմիտե***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

15.04.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-Թ-19/3.1պայմանագրի

Ք. Երևան <<28>> հունիսի 2019թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Նիկոյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Տ. Ղարիբյանի, (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև կողմեր, հիմք ընդունելով կողմերի միջև 15.04.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-Թ-19/3.1 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին Պայմանագրի Հավելված N1 հանդիսացող տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով նախատեսված 2-րդ եռամսյակում մատակարարվող թղթի մատակարարման ժամկետը սահմանել մինչև 22.07.2019թ.:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ քննչական կոմիտե	«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5	ք. Երևան, Վարդանանց 110
ՀՀ ՖՆ աշխատակազմի	«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն,	Հ/Հ 163007031509
Հ/Հ 900011000834	ՀՎՀՀ 01548908
ՀՎՀՀ 02631263	էլ. հասցեն՝ ssmartline@mail.ru
	Հեռ. (010) 558483
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ